«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2014 թվականի

Համալսարանում ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակի և դեկանատների ու ամբիոնների խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանում ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակը և դեկանատների ու ամբիոնների խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան), գիտական խորհուրդն արձանագրում է. ռեկտորատը, կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, դեկանատները և թողարկող ամբիոնները 2013-2014 ուսումնական տարում զգալի աշխատանքներ են կատարել ուսանողության ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ: Կազմակերպությունների հետ համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ընտրվել են նախկինում անտեսված մոտ յոթ տասնյակ կազմակերպություններ, որոնց ռեկտորի անունից նամակ-խնդրագրեր են ուղարկվել, ինչի արդյունքում 2013-2014 ուսումնական տարում նրանցից 16-ի հետ պայմանագրեր են կնքվել: Դրանով համալսարանի հետ համագործակցող պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների թիվը հասել է 75-ի:

Ուսանողության փորձառություններն ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասն են և կատարվող կրթական բարեփոխումները թելադրում են, որ համապատասխան փոփոխություններ իրականացվեն ինչպես փորձառության ծրագրերում, այնպես էլ բուհ-կազմակերպություն համագործակցության ակտիվացման ասպարեզում:

Անցած ուսումնական տարում փորձառության արդյունավետ կազմակերպման խոչընդոտները պայմանականորեն բաժանվել էին երեք խմբի, որոնք արդիական են նաև այժմ՝

1. կազմակերպական,
2. բովանդակային,
3. վերահսկողության և գնահատման:

Կազմակերպական առումով, և՛ կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, և՛ թողարկող ամբիոնները որոշ ջանքեր են գործադրել ուսանողների փորձառության վայրերի ընտրության և տեղավորման համար: 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում ուսումնաարտադրական, գիտահետազոտական և գիտամանկավարժական փորձառություններ են կազմակերպվել 2135 ուսանողի համար, որոնցից 1500-ը (շուրջ 70%)՝ խոշոր կազմակերպություններում՝ բուհի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

Փորձառության անցկացման վայրերի կեսից ավելին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ են, իսկ 1/4-ից ավելին՝ բանկեր:

Թողարկող ամբիոնները պետք է աջակցություն ցուցաբերեն ռեկտորատին, կարիերայի և մարքեթինգի կենտրոնին՝ ստեղծագործական համագործակցության պայմանագրեր կնքելու գործում:

Կազմակերպական առումով մինչ այժմ հստակ կանոնակարգված չէ թողարկող ամբիոններից նշանակված ղեկավարների այցելությունները փորձառության վայրեր: Դա հատկապես կարևոր է փորձառության կազմակերպման առաջին օրերին, երբ օպերատիվ լուծում պահանջող տարբեր բնույթի խնդիրներ են ծագում: Հակառակ պարագայում կազմակերպությունները հաճախ տարբեր պատճառաբանություններով ուսանողների հաճախումների անհատական ժամանակացույցեր են կազմում (կանչում են շաբաթական մեկ-երկու անգամ) կամ ետ են ուղարկում, ինչի պատճառով էլ ի հայտ են գալիս ուշացած նամակ-ուղեգրերը, փորձառության վայրի փոփոխության հետ կապված դժվարությունները: Փորձառության արդյունավետությունը շեշտակի նվազում է նաև այն դեպքերում, երբ ավարտական աշխատանքների թեմաները չեն համապատասխանում փորձառության վայրի գործունեությանը:

Անկասկած, և՛ ռեկտորատը, և՛ ֆակուլտետները, և՛ թողարկող ամբիոնները որոշ աշխատանքներ են կատարել փորձառությունն ավելի բովանդակալից դարձնելու առումով: Սակայն շատ են նաև թերություններն ու բացթողումները և այստեղ ամենակարևորն այն է, որ փորձառության ծրագրերի հարցերը դեռևս միտված չեն ուսանողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների աճին:

Թերությունների հաջորդ խումբը կապված է վերահսկողության և գնահատման հետ: Իրողությունն այն է, որ հաճախումների նկատմամբ թույլ վերահսկողությունն ու անտարբերությունը կամ դրա բացակայությունը ոչ միայն կազմակերպությունների կողմից է, այլ նաև համապատասխան ամբիոնների: Դա իր արտացոլումն է գտնում գնահատման ասպարեզում: Կան ամբիոններ, որոնք փորձառությունների հաշվետվությունների պաշտպանության ժամանակ չափազանց լոյալ վերաբերմունք են ցուցաբերում, շռայլում են «գերազանց» գնահատականները, ինչն ուղղակիորեն ազդում է փորձառության կարևորության գիտակցման վրա:

Փորձառություններն արդյունավետ կազմակերպելու, առկա թերությունները վերացնելու նպատակով՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել կարիերայի և մարքեթինգի կենտրոնին, թողարկող ամբիոնների վարիչներին՝**
   ա) գործուն քայլեր ձեռնարկել ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ տնտեսության բոլոր ոլորտների կազմակերպությունների հետ համագործակցության նոր պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

2. **Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին՝**
   ա) արդիականացնել փորձառությունների ծրագրերը, դրանք համապատասխանացնել կրթական բարեփոխումների նոր պահանջներին,

բ) խստացնել հսկողությունը փորձառություն անցնող ուսանողների հաճախումների նկատմամբ,
գ) պահանջել ղեկավարներից, որ փորձառության ընթացքում առնվազն երկու անգամ լինեն տեղերում՝ ծրագրով տրված հանձնարարականների կատարման ընթացքը վերահսկելու և կազմակերպություններից նշանակված ղեկավարների հետ փորձառության արդյունավետության բարձրացման հարցերը քննարկելու համար,
դ) բացառել փորձառությանը չհաճախող ուսանողների հաշվետվություն ներկայացնելու և պաշտպանելու հնարավորությունը:

3. **Հանձնարարել ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժնին՝**
   ա) խիստ վերահսկողություն սահմանել բոլոր մասնագիտություններով փորձառությունների ծրագրերն արմատապես փոխելու, դրանցում գործնական առաջադրանքների բաղադրիչն ուժեղացնելու և կազմակերպությունների գործունեության բնույթին ու առանձնահատկություններին համապատասխանեցնելու նկատմամբ:

4. **Սույն որոշումը քննարկել դեկանատների և թողարկող ամբիոնների նիստերում և համապատասխան աշխատանքներ կատարել նշված հանձնարարականների կատարման համար:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին և ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

27.05.2014 թ.
ք. Երևան